

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱԳՐԵՄԻԱՅԻ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ**

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Միջազգային քրեական դատարանի փոխհարաբերությունների տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում ագրեսիայի հանցագործության դեպքում դատարանի կողմից իր իրավագործության իրականացման եղանակների հիմնահարցը:

Ինչպես գիտենք, ագրեսիայի հանցակազմը Հռոմի ստատուտի սկզբնական տարբերակում (այնպես, ինչպես այն ընդունվել է 1998 թ. հուլիսի 17-ին Միավորված ազգերի կազմակերպության լիազոր ներկայացուցիչների Հռոմի կոնֆերանսում) նախատեսված չէր: Մտատուտի 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում էր, որ դատարանն ագրեսիայի հանցագործության նկատմամբ իր իրավագործությունը կիրականացնի, երբ 121 և 123 հոդվածներին համապատասխան կընդունվի այդ հանցագործությունը սահմանող և այն պայմաններն ամրագրող դրույթը, որոնց դեպքում դատարանն իրականացնում է իր իրավագործությունը այդ հանցագործության նկատմամբ: Նախատեսվում էր նաև, որ նշված դրույթը պետք է համատեղելի լինի ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթների հետ:

Մինչ վերանայման կոնֆերանսը հիմնական բանավեճերը գրականության մեջ ծավալվում էին ոչ այնքան ագրեսիայի հանցակազմի նյութաիրավական բովանդակության վերաբերյալ, որքան այն հարցի շուրջ, թե ովքեր կարող են հանդիսանալ պատասխանատվության սուբյեկտ ագրեսիայի հանցագործության դեպքում, ինչպիսի եղանակներով պետք է իրականացվի նման պատասխանատվությունը, ինչ դեր պետք է վերապահվի Անվտանգության խորհրդին վերոհիշյալ հարցերում²:

¹ ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Վ. Հ. Հովհաննիսյան:

² Carrie McDougall, «The Crime of Aggression Under the Rome Statute of the International Criminal Court», Cambridge University Press, 2013, էջ 205:

2010 թ. հունիսին Ուզանդայի մայրաքաղաք Կամպալայում կայացած Վերանայման կոնֆերանսում ընդունվեցին ստատուտի համապատասխան փոփոխությունները, որոնցով սահմանվեցին ազրեսիայի հանցակազմը, պատասխանատվության սուբյեկտը, ինչպես նաև դատարանի կողմից ազրեսիայի հանցագործության նկատմամբ իրավագործության իրականացման եղանակները:

Չանդրադառնալով հանցագործության նյութաիրավական կողմին՝ ներկայացնենք իրավագործության իրականացման եղանակները: Ստատուտի 15bis հոդվածի համաձայն՝ էթե դատախազը հանգում է եզրակացության, որ ազրեսիայի հանցագործության կապակցությամբ հետաքննություն սկսելու համար առկա է ողջամիտ հիմք, պետք է սկզբում պարզի՝ կա արդյոք ԱԽ համապատասխան որոշում ազրեսիայի ակտի առկայության վերաբերյալ: Այդ նպատակով նա տեղեկացնում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին դատարանում ուսումնասիրվող իրավիճակի մասին և ուղարկում է վերջինիս ողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը: ԱԽ համապատասխան որոշման առկայության դեպքում դատախազը կարող է հետաքննություն սկսել ազրեսիայի հանցագործության նկատմամբ: Եթե ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացնելուց հետո վեց ամսվա ընթացքում ԱԽ-ը որոշում չկայացնի ազրեսիայի ակտի առկայության մասին, ապա դատախազը կարող է հետաքննություն սկսել, եթե ստատուտի 15-րդ հոդվածի համաձայն ստանա Մինչդատական վարույթի պալատի թույլտվությունը հետաքննություն իրականացնելու վերաբերյալ: Մակայն այս դեպքում դատարանը չի կարողանա իրականացնել իր իրավասությունը ազրեսիայի հանցագործության նկատմամբ, եթե այն կատարվել է ստատուտին մասնակից չհանդիսացող պետության տարածքում, վերջինիս քաղաքացիների կողմից, կամ մասնակից պետությունների նկատմամբ, եթե վերջիններս դատարանի քարտուղարին ուղարկված հայտարարությամբ բացառել են իրենց նկատմամբ դատարանի իրավագործությունը՝ կապված ազրեսիայի հանցագործության հետ³:

Թեև վերոհիշյալ հոդվածով նախատեսվում է պետությունների կողմից ևս որոշակի իրավիճակի ներկայացման հնարավորություն

³ Юсупов Мохаммад-Бастани Рамзанович, «Международно-правовое регулирование процессуального деятельности Международного уголовного суда», диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2012, стр. 100.

դատարանին՝ կապված ագրեսիայի հանցագործության հնարավոր դեպքերի հետ, այնուամենայնիվ նման դրույթի պրակտիկ կիրառման հնարավորությունը շատ փոքր է: Ստատուտի 15ter հոդվածով էլ նախատեսվում է ԱԽ կողմից որոշակի իրավիճակի փոխանցման հնարավորությունը դատախազին կապված ագրեսիայի հանցագործության հետ:

Այսպիսով, 15bis հոդվածի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ ագրեսիայի ակտի առկայությունը որոշելու հնարավորությամբ է օժտված նաև Մինչդատական վարույթի պալատը: Այս դրույթը գրականության մեջ տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տալիս: Որոշ հեղինակների կարծիքով, նշված դրույթը հակասության մեջ է գտնվում ՄԱԿ-ի կանոնադրության 39-րդ հոդվածի հետ, որից բխում է, որ միայն Անվտանգության խորհուրդն է իրավասու որոշելու խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը⁴: Այս դիրքորոշումը իր արտահայտումն է գտել նաև ՄԱԿ-ի Միջազգային դատարանի դատավոր Ք. Վիրամանտրիի գործերից մեկում արտահայտված առանձին կարծիքում: Վերջինս մասնավորապես նշում է. «Կանոնադրության 39-րդ հոդվածից հետևում է, որ խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայության մասին որոշման ընդունումը ամբողջությամբ գտնվում է Անվտանգության խորհրդի լիազորության ներքո: Միայն Անվտանգության խորհուրդն է իրավասու որոշում կայացնելու որոշակի իրավիճակի առկայության վերաբերյալ, որը կպահանջի Կանոնադրության 7-րդ գլխով նախատեսված միջոցների կիրառումը»:⁵ Հակառակ տեսակետի կողմնակիցների պնդումներն այն մասին, թե Անվտանգության խորհրդի կողմից չի կարող ագրեսիայի առկայության մասին որոշում ընդունվել՝ *Միջազգային քրեական դատարանի իրավագործության իրականացման նպատակով*, այս տեսակետի կողմնակիցները հակադրում են, որ նմանատիպ որոշման կայացումը ինքնին չի ենթադրում անպայմանորեն ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ և 42-րդ

⁴ Տես նույն տեղում, էջ 101:

⁵ Case Concerning Questions of Interpretation and Application of the 1971 Montreal Convention Arising From the Aerial Incident at Lockerbie, Libyan Arab Jamahirya v. United States of America, Request for the Indication of Provisional Measures, Order of 14 April 1992, Dissenting Opinion of Judge Weeramantry, էջ 66

հողվածներով նախատեսված հարկադրական միջոցների կիրառումը: Այս մտքին է հակված նաև Կելզենը, ով պնդում է, որ 39-րդ հողվածի համաձայն՝ խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայության մասին որոշում կայացնելուց հետո Անվտանգության խորհուրդը կարող է «ցանկացած բնույթի (of any kind)» հանձնարարականներ ընդունել բացի կանոնադրության 41-րդ և 42-րդ հողվածներում նշվածները:⁶ Հակառակ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ ագրեսիայի ակտի առկայությունը փաստելը միայն ԱԽ մենաշնորհը չէ, և նմանատիպ նորմի նախատեսումը ստատուտի մեջ փաստացի ԱԽ հինգ մշտական անդամներին կապահովագրեր Միջազգային քրեական դատարանի կողմից տվյալ պետությունների քաղաքացիների նկատմամբ որոշակի գործողություններից կապված ագրեսիայի հանցագործության հետ:⁷ Որոշ հեղինակներ պնդում են, որ միայն Անվտանգության խորհուրդը կարող է որոշում ընդունել ագրեսիայի առկայության մասին, եթե նման որոշումը կապված է ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխով նախատեսված միջոցների կիրառման հետ: Ինչ վերաբերում է այլ մարմինների՝ ագրեսիայի առկայության մասին որոշում ընդունելուն, ապա ՄԱԿ-ի Կանոնադրության 39-րդ հողվածը վերջիններիս չի արգելում դա, բայց արգելում է նման մարմիններին որոշում կայացնել ագրեսիայի ակտի առկայության մասին՝ կապված Անվտանգության խորհրդի կողմից որոշակի հարկադրական միջոցների ձեռնարկման հետ:⁸

ԱԽ կողմից ագրեսիայի առկայությունը որոշելու մենաշնորհի հետ կապված ՄԱԿ-ի Միջազգային դատարանի դատավոր Բրունո Զիման «Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունն ընդդեմ Ուգանդայի» գործով արտահայտած իր առանձին կարծիքի մեջ նշում է, որ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը չպետք է խուսափի Ուգանդայի գորքերի լայնամասշտաբ ներխուժումը Կոնգո ագրեսիայի ակտ համարելուց և որ «... ԱԽ-ն ունի իր քաղաքական պատճառները նման

⁶ **Hans Kelsen**, «The Law of the United Nations: A Critical Analysis of its Fundamental Problems», The Lawbook Exchange, Ltd., 1950, էջ 438

⁷ **William A. Schabas**, «An Introduction to the International Criminal Court», Cambridge University Press, 2011, էջ 152

⁸ **Mark S. Stein**, «The Security Council, the International Criminal Court and the Crime of Aggression: How Exclusive is the Security Council's Power to determine Aggression?», Indiana International & Comparative Law Review, Volume 16, No 1, 2005, էջ 10:

ներխուժումը ագրեսիա չորակելու համար: Բայց դատարանը չպետք է հետևի նման քաղաքականությանը: Այն իր որոշումները պետք է կայացնի հիմնվելով բացառապես իրավունքի վրա քաղաքական ասպեկտները թողնելով դրանից հետո...»:⁹ Այսինքն նա ընդունում է Միջազգային դատարանի կողմից ևս ագրեսիայի առկայության փաստը որոշելու հնարավորությունը:

Այժմ փորձենք ներկայացնել որոշակի նկատառումներ կապված վերոնշյալ իրավիճակի հետ: Նախ արձանագրենք, որ ՄԱԿ-ի կանոնադրության 39-րդ հոդվածի վերլուծությունից չի բխում, որ միայն Անվտանգության խորհուրդն է իրավասու որոշելու ագրեսիայի առկայության փաստը: Եթե ամբողջության մեջ դիտարկենք կանոնադրության 7-րդ գլխի հոդվածները, ապա կարող ենք փաստել, որ 39-րդ հոդվածով նախատեսված գործողությունները (խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայության որոշում) հանդիսանում են անհրաժեշտ նախապայման ԱԽ կողմից կանոնադրության 7-րդ գլխով իրեն վերապահված բացառիկ լիազորություններն իրականացնելու համար, որոնք պետությունների միջազգային հանրության կողմից տրվել են ԱԽ-ին՝ որպես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման հիմնական պատասխանատուի: Նմանատիպ իրավիճակներում միայն Անվտանգության խորհուրդն է իրավասու որոշելու խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայության փաստը, քանի որ նմանատիպ որոշումը ենթադրում է հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշման ընդունում: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի պրակտիկայում եղել են գործեր, որոնց քննության ժամանակ դատարանը ստիպված է եղել իրավական չափորոշիչներով գնահատել «զինված հարձակում» հասկացությունը, ինչը ավելի լայն հասկացություն է, քան ագրեսիան:¹⁰ Մասնավորապես, Միջազգային դատարանը վերոհիշ-

⁹ *Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo v. Uganda)*, Judgment of 19 December, 2005, Separate Opinion of Judge Simma, para. 3.

¹⁰ *Տես, մասնավորապես, Case Concerning Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nicaragua v. United States of America)*, Judgment of 27 June 1986, պարբ. 227; *Case Concerning Oil Platforms (Islamic Republic of Iran v. United States of America)*, Judgment of 6 November 2003, պարբ. 64:

յալ հարցին անդրադարձել է պետությունների ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված ինքնապաշտպանության իրավունքին դիմելու համատեքստում: Նշենք նաև, որ ստատուտի 8bis հոդվածով ագրեսիայի հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն այն անձը, ով իր պաշտոնական դիրքի շնորհիվ ի վիճակի է արդյունավետ վերահսկողություն իրականացնել կամ ուղղորդել պետության քաղաքական կամ ռազմական այն գործողությունները, որոնք կազմում են ագրեսիայի հանցակազմը: Հանցագործության սուբյեկտ կարող են լինել միայն քաղաքական կամ ռազմական ամենաբարձր պաշտոններ զբաղեցնող անձինք: Հետևաբար, ագրեսիայի հանցագործությունը մշտապես վերագրելի է տվյալ պետությանը, ուստի ագրեսիայի հանցագործության հաստատման փաստը մշտապես ենթադրում է տվյալ պետության կողմից ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու միջազգային-իրավական պարտավորության խախտման վկայություն և տվյալ պետության նկատմամբ ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածներով նախատեսված հարկադրական միջոցների կիրառում: Կարծում ենք՝ նման կապը ենթադրում է, որ ագրեսիայի հանցագործության դեպքում պետք է, և անհրաժեշտ է նախ և առաջ հավաստել կոնկրետ պետության կողմից ագրեսիայի առկայության փաստը, ինչից հետո կարող է առաջ գալ պատասխանատու անձանց միջազգային քրեական պատասխանատվության հարցը: Առանց ԱԽ համապատասխան որոշման՝ Մինչդատական վարույթի պալատի կողմից ագրեսիայի հանցագործության համար դատախազին գործ հարուցելու թույլտվություն տալը ուղղակիորեն կվկայի ԱԽ անգործության և ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու մասին: Կարծում ենք, որ ագրեսիայի հանցագործության նկատմամբ միջազգային քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը Հռոմի ստատուտում ընդգրկելը առաջնահերթ ուղղված է միջազգային խաղաղության և անվտանգության ապահովմանը և վերականգնմանը, ուստի այս կապակցությամբ դատարանի ձեռնարկելիք գործողությունների հիմքում պետք է ընկած լինի ԱԽ համապատասխան որոշումը ագրեսիայի ակտի առկայության վերաբերյալ: Հետևաբար ստատուտի 8bis հոդվածով նախատեսված նորմը Մինչդատական

վարույթի պալատի՝ ագրեսիայի հանցագործության կապակցությամբ դատախազին գործ հարուցելու թույլտվություն տալու լիազորության վերաբերյալ չի համապատասխանում ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ և 39-րդ հոդվածի պահանջներին և հետագա շտկումների կարիք ունի: Բացի այդ, այստեղ առաջ է գալիս Հռոմի ստատուտի վերոհիշյալ հոդվածի պրակտիկ կիրառելիության խնդիրը: Կարծում ենք, որ առանց ԱԽ համապատասխան որոշման դատախազի կողմից քննության իրականացումը հաջողության հասնելու շատ ավելի քիչ հնարավորություններ ունի: Թեև հանուն արդարության նշենք, որ նույնիսկ ԱԽ որոշման առկայության դեպքում ագրեսիայի հանցագործության դեպքում քննության հաջողությունը կախված է այլ գործոններից, ինչպիսիք են ԱԽ կողմից կիրառվելիք հարկադրանքի միջոցները, ընդհուպ զինված ուժերի գործածության հետ կապված միջոցները, ագրեսոր պետության քաղաքական ռեժիմի փոփոխությունը, ինչը կարող է բերել դատարանի հետ համագործակցության պատրաստակամության: Այնուամենայնիվ նշենք, որ ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ կոնկրետ իրավիճակը, որն իրենից ենթադրում է խաղաղության սպառնալիք, խաղաղության խախտում կամ ագրեսիայի ակտ, *առկա է*: Պրակտիկայում հնարավոր են որոշակի դեպքեր, երբ ագրեսիայի հանցագործության նկատմամբ դատարանի իրավագործության իրականացման համար չպահանջվի Անվտանգության խորհրդի որոշումը ագրեսիայի ակտի առկայության վերաբերյալ: Պատկերացնենք որոշակի իրավիճակ, երբ մի պետություն ունի տարածքային պահանջներ մեկ այլ պետության նկատմամբ և հարձակվում է դրա վրա: Վերջինս հետ է մղում այդ հարձակումը, ինչն իր հերթին հանգեցնում է հարձակվող պետության ռեժիմի փոփոխության, և տվյալ պետությունը հրաժարվում է մյուս պետության նկատմամբ ցանկացած տարածքային պահանջներից և տալիս է համապատասխան փոխհատուցում: Այնուամենայնիվ, Միջազգային քրեական դատարանի դատախազը որոշում է հետաքննություն իրականացնել ագրեսիայի հանցագործության դեպքի կապակցությամբ: Սակայն այս իրավիճակում տրամաբանական է արդյոք դիմել Անվտանգության խորհրդին ագրեսիայի ակտի առկայության մասին որոշում ստանալու համար: Կարծում ենք, որ նմանատիպ ի-

րավիճակում, երբ միջպետական հարաբերությունները արդեն այնպիսի փուլում են, որ իրենցից որևէ վտանգ չեն ներկայացնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, Անվտանգության խորհրդի կողմից ագրեսիայի ակտի առկայության մասին որոշման ընդունման անհրաժեշտությունը՝ որպես կանոնադրության 7-րդ գլխով միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնմանն ու ապահովմանն ուղղված հարկադրական գործողությունների ձեռնարկման նախապայման, բացակայում է: Այսպիսի իրավիճակում լավագույն ելքը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով ՄԱԿ-ի Միջազգային դատարան դիմելն է, թե արդյոք հարձակվող պետության գործողությունները իրենցից ներկայացնում են ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու միջազգային-իրավական պարտավորության լրջագույն խախտում, ինչը կարող է կարևոր նախահիմք հանդիսանալ Միջազգային քրեական դատարանի մինչդատական վարույթի պալատի կողմից դատախազին հետաքննություն սկսելու թույլտվություն տալու որոշման ընդունման համար: Նման դեպքերում, Միջազգային դատարանի կողմից խորհրդատվական եզրակացությունը, մեր կարծիքով, նպատակ կունենա զուտ իրավական գնահատական տալու պետության հակաիրավական գործողությունների բնույթին և նպատակ չի ունենա տվյալ պետության նկատմամբ կիրառելու հարկադրական միջոցներ, ինչը լիովին իրավաչափ է ՄԱԿ-ի կանոնադրության, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստատուտի 36-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի և առկա նախադեպային իրավունքի տեսանկյունից:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

- Միջազգային քրեական դատարանի իրավագործության իրականացումը ագրեսիայի հանցագործության նկատմամբ պարտադիր պետք է հիմնվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ ագրեսիայի առկայության մասին համապատասխան բանաձևի վրա, եթե ագրեսիայի հիմքը կազմող գործողությունները դեռևս շարունակվում են: Այս առումով Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի համապատասխան դրույթները շտկման կարիք ունեն:

- Եթե ագրեսիայի հիմքը կազմող գործողությունները անցյալում են և փաստացի վերականգնվել է status quo ante-ն, ապա ագրեսիայի հանցագործության նկատմամբ դատարանի իրավագործությունը կարող է իրականացվել առանց Անվտանգության խորհրդի համապատասխան որոշման, ինչը համահունչ է նաև ներկայումս գործող իրավակարգավորումներին:

Բոլոր դեպքերում ագրեսիայի հանցագործության նկատմամբ դատարանը կարող է իր իրավագործությունը իրականացնել միայն 30 անդամ-պետությունների կողմից նշված փոփոխությունների վավերացնելուց հետո մեկ տարի անց և ոչ շուտ, քան 2017 թ. հունվարի մեկը:

Мгер Мкртчян

аспирант кафедры европейского и международного права ЕГУ

ОСУЩЕСТВЛЕНИЕ ЮРИСДИКЦИИ МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО СУДА В ОТНОШЕНИИ ПРЕСТУПЛЕНИЯ АГРЕССИИ

В статье рассматривается вопрос об осуществлении юрисдикции Международного уголовного суда в отношении преступления агрессии. Обсуждаются соответствующие статьи Римского статута в свете постановлений Устава ООН.

Автор, анализируя различные мнения, отраженные в литературе, пришел к выводу, что статьи которые устанавливают юрисдикцию Суда в отношении преступления агрессии имеют некоторые противоречия с постановлениями Устава ООН. Эта позиция основывается на факте, что по разрешению Палаты предварительного производства прокурор Суда может начать расследование в отношении преступления агрессии без постановления Совета безопасности ООН о наличии акта агрессии.

EXECUTION OF JURISDICTION OF THE INTERNATIONAL CRIMINAL COURT OVER THE CRIME OF AGGRESSION

The methods of realizing the jurisdiction of International Criminal Court over the crime aggression are discussed in this article. The relevant articles of Rome's statute are analyzed in the light of articles of UN Charter.

The author, combining the various views existing in the literature, comes to the conclusion, that the articles providing the Court's jurisdiction over the crime of aggression have some contradiction with relevant articles of UN Charter. Such position is based on the possibility of giving an opportunity to the prosecutor by Pre-Trial Chamber to start investigation over the crime of aggression without having the decision of Security Council about the existence of the act of aggression.

Բանալի բառեր՝ ագրեսիա, իրավագործություն, կանոնադրություն, Անվտանգության խորհուրդ, Մինչդատական վարույթի պալատ, հետաքննություն, հարկադրական միջոցներ:

Ключевые слова: агрессия, юрисдикция, статут, Совет Безопасности, Палата предварительного производства, расследование, принудительные меры.

Key words: aggression, jurisdiction, statute, Security Council, Pre-Trial Chamber, investigation, coercive measures.